Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Ներքին Գետաշենի թիվ1միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Առարկա՝ Ինֆորմատիկա

Թեմա՝ «Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը ինֆորմատիկա առարկայի դասավանդման ընթացքում, ինտերակտիվ մեթոդների միջոցով»

Վերապատրաստող, մենթոր՝ Մարիամ Սեդրակյան

Ուսուցիչ՝ Գոհար Ճաղարյան

Ն.Գետաշեն 2022

Բովանդակություն

Ներածություն……3

Արժեքային համակարգ……..5

Գրական ակնարկ ……..9

Փորձարարական դասեր……....11

Փորձարարական դաս-1……..……12

Փորձարարական դաս-2……13

Եզրակացություն……..14

Գրականության ցանկ……15

Հավելված……..16

Դասապլան -1……..16

Դասապլան-2……19

Ներածություն

Հայաստանի հանրապետությունում կրթական բաղաքականության իրականացման գործում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կի-ռառումը նպաստում է կրթության որակի բարձրացմանը: Նոր տեխնոլոգիաների և ինտերնետի օգտագործումը զգալիորեն ընդլայնում է ուսումնական նյութի որոնման, հաղորդման և յուրացման հնարավորությունները՝ որակական նոր բնույթ հաղորդելով ուսուցման կազմակերպմանը և ապահովելով ինքնակրթության ու շարունակական կրթության լայն հնարավորություն:

Համակարգիչը դպրոցում դիտարկվում է որպես ուսումնառության հիմնական միջոցներից մեկը, իսկ ինֆորմատիկան (տեղեկագիտությունը) ՝ ուսումնական նյութի արդյունավետ յուրացմանը նպաստող համապիտանի առարկա:

Կրթական նոր պահանջները բավարարելու համար դպրոցական լաբորատորիաները պետք է հարստացնել տեղեկատվական տեխնոլոգիաների վրա հիմնված սարքավորումներով:

ՏՀՏ-ի օգտագործումը որակապես փոխում է ուսուցչի դերը, ուսուցիչը դառնում է սովորողի կրթական գործը կազմակերպող, նրան օժանդակող և գնահատող գործընկեր: Համակարգիչը դառնում է նաև դպրոցի կառավարման, ուսումնական գործընթացի կազմակերպման, սովորողների մասին տվյալների կուտակման, ծնողների հետ տարվող աշխատանքի և արտադասարանային գործունեության իրականացման գործիք:

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները սերտորեն առնչվելու են բոլոր առարկաների դասավանդմանը: Անհրաժեշտ է դառնում դպրոցներում ստեղծել էլեկտրոնային գրադարաններ:

Միջին դպրոցի ցածր դասարաններում ինֆորմատիկայի դասավանդման ընթացքում շեշտը դրվում է համակարգչով աշխատելու հիմնական հմտություններ մշակելու, ստեղծագործությունը խրախուսելու վրա: Առարկայի դասավանդումը նպաստում է նաև ժամանակակից համակարգչային ուսուցողական ծրագրերով այլ առարկաներից որոշակի նյութ հաղորդելուն, սովորողների կողմից դրա յուրացմանը:

Միջին դպրոցի բարձր դասարաններում ինֆորմատիկայի դասավանդման հիմնական նպատակը առարկայի վերաբերյալ հիմնարար գիտելիքների յուրացումը, ժամանակակից գիտական և հասարակական կյանքում ինֆորմատիկայի դերի ընկալումը, համակարգչային հմտությունների զարգացումը, հանրահայտ կիրառական ծրագրերով աշխատելու կարողության ձևավորումն է: Ձեռք բերված հմտությունները կկիրառվեն նաև մյուս առարկաների ուսումնական նյութի հայթայթման, մշակման, յուրացման, տնային առաջադրանքների կատարման, ազատ ժամանցի կազմակերպման նպատակով:

Ավագ դպրոցի համապատասխան տարբերակված հոսքում իրականացվում է ինֆորմատիկայի խորացված ուսուցում:

Ավագ դպրոցի մյուս հոսքերում ինֆորմատիկայի ուսուցումը զարգացնում է տարածված ոչ բարդ կիրառական ծրագրերի ուսումնասիրության, կյանքի պահանջների և ապագա աշխատանքային գործունեության համար համակարգչային անհրաժեշտ հմտություններ:

Նոր սերնդի կրթությունը, դաստիարակությունը եւ զարգացումը իրականացվում է տեղեկատվական հագեցված միջավայրում: Տեղեկատվական տեխնոլոգիաները ուսուցիչների մասնագիտա-մանկավարժական, մեթոդական, կազմակերպչական նոր որակներ են թելադրում: Այսօր ցանկացած առարկա դասավանդող ուսուցիչ ՏՀՏ կիրառելու մեծ հնարավորություն ունի, որոնցից են էլեկտրոնային գրադարաններ, բառարաններ, շնորհանդեսներ, էլ. փոստ, տեսակոնֆերանսներ, զրուցարաններ, ֆորումներ, վեբինարներ և այլ տարբեր առցանց գործիքներ: Ցուգահեռ ՏՀՏ-ների ներդրումը ուսումնական գործընթացում ուսուցչի համար ինքնակրթության, մասնագիտական աճի, ստեղծագործական զարգացման հզոր խթան է հանդիսանում և կոչված է լուծել մի շարք դիդակտիկ խնդիրներ՝

- սովորողների մտավոր ունակությունների ակտիվացում,
- պասիվ սովորողների ներգրավում,
- ժամանակակից գործիքակազմի կիրառում,
- սովորողների մոտ տեղեկատվության տարբեր աղբյուրներից օգտվելու կարողություն ձևավորում,
- տարբերակված ուսուցման հնարավորություն,

- ուսումնական գործընթացի ակտիվացում,
- սովորողների հետազոտական աշխատանքներում ներգրավելու հնարավորություն,
- ուսումնական գործընթացի ճկունության ապահովում:

ԱՐԺԵՔԱՑԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Սույն բաղադրիչով նախատեսված համակարգը արտահայտվում է սովորողի համապատասխան գործողությունների, վերաբերմունքի և վարքի միջոցով:

Այս բաղադրիչի նպատակն է ձևավորել անձ և քաղաքացի, որը պետք է՝

ա) գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության, արվեստի,ավանդույթների, ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը,

բ) հարգի Հայաստանի պետական խորհրդանիշները, լինի հայրենասեր, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,

գ) գիտակցի, որ գիտությունը, արդիական տեխնոլոգիաները, կրթությունը մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում,

դ) գիտակցի, որ իր համար կարևորագույն արժեքներն են գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը,

ե) կարևորի բարոյական չափանիշները և քրիստոնեական ու համամարդկային արժեքները, լինի ազնիվ, գթասիրտ, արդարամիտ, օրինապահ, բարեկիրթ,

զ) կարևոր գեղագիտական արժեքները, գնահատի գեղեցիկն, բառին, ճշմարիտը,

է) գիտակցի իր տեղն ու դերը ընտանիքում և հասարակության մեջ լինի նախա-

ձեռնող, դրսևորի արժանավայել պահվածք,

ը) գիտակցի ծնողների տարիքով մեծերի և փոքրերի, ընկերների և համայնքի

նկատմամբ հարգանքի դրսևորման կարևորությունը,

թ) հարգի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, լինի մարդասեր,

հանդուրժող, քաղաքակիրթ վերաբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդների ներկա-

յացուցիչների և նրանց մշակույթների հանդեպ,

ժ) անաչառորեն գնահատի իր ուժերն ու կարողությունները՝ բավահայտելով սեփա-

կան անձի թերագնահատումը կամ գերագնահատումը ,

ժա) դրսևորի աշխատասիրություն, հնարամտություն, նպատակադրվածություն,

արժևորի ու գնահատի սեփական և այլոց աշխատանքը,

ժբ) մշտապես հոգ տանի իր առողջության մասին, կարևորի մարմնակրթության դերը

հետևողական լինի առողջ ապրելակերպի և անվտանգ կենսագործունեության կա-

նոնների կիրառման գործում:

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Ներկայացվող պահանջները սահմանում են այն մակարդակը, որը պետք է ապահովի միջնակարգ հանրակրթական դպրոցը՝ ըստ ուսումնական բնագավառների, բովանդակային բաղադրիչների և դպրոցի աստիճանների:

Ընդհանրական որակական պահանջները որոշակիացվում և ամրագրվում են հանրակրթական առարկաների չափորոշիչներում և ծրագրերում, որտեղ նշվում է նաև սովորողին ներկայացվող պահանջների պարտադիր նվազագույն

մակարդակը: Ավագ դպրոցի ընդհանուր և տարբերակված խոսքերից յուրաքանչյուրի համար, այս պահանջների պահպանմամբ, մշակվում են առարկայական առանձին չափորոշիչներ:

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ և ՏՀՏ

«Ինֆորմատիկա և ՏՀՏ» բնագավառն ապահովում է հանրակրթության մեջ ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումն ու կիրառումը: Տեղեկագիտությունը (ինֆորմատիկան) համապարփակ միասնացնող (ինտեգրող) առարկա է, որի դասավանդումը դպրոցում ունի առանձնահատուկ կարևորություն՝ նպաստելով միջառարկայական կապերի բացահայտմանն ու խորացմանը: Բնագավառի հիմնական նպատակն է զարգացնել տեղեկատվություն ձեռք բերելու, ստեղծագործելու, հաղորդակցվելու, ինչպես նաև համակարգչային ծրագրերին ու ինտերնետային տեխնոլոգիաներին տիրապետելու կարողություններ և հմտություններ:

Այս բնագավառը նպաստում է ուսուցման արդյունավետության բարձրացմանը և կրթության շարունակության ապահովմանը:

3.Արժեքների համակարգ

Տարրական դպրոցն ավարտողը պետք է՝ . գիտակցի ժամանակակից կյանքում համակարգչի դերն ու նշանակությունը,	Միջին դպրոցն ավարտողը պետք է՝ 1. Գիտակցի տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների դերը ժամանակակից արժեքների համակարգում	Ավագ դպրոցն ավար-տողը պետք է գիտակցի հայ ժողովրդի պատմական ժառանգության պահպանման գործում տեղեկատվական տեխնոլոգիաների դերը,
	1. կարևոր «անվտանգ» տեղեկատվություն ստանալու	.գիտակցի և արժևորի

	և տարածելու հետ կապված իր իրավունքներն ու պատասխանատվությունը,	«անվտանգ» տեղեկատվություն ստանալու և տարածելու հետ կապված իր իրավունքներն ու պատասխանատվությունը
4.ձգտում ունենա ուսումնասիրելու և կիրառելու համակարգչի ընձեռած հնարավորությունները:	1. կիրառի ինտերնետում աշխատելու համընդհանուր ճանաչում ստացած վարվելակերպի կանոնները	.լինի ինտերնետում աշխատելու համընդհանուր ճանաչում ստացած վարվելա կերպի կանոնների կրողն ու տարածողը

Գրական ակնարկ

Նոր կրթական ռազմավարությունը բերել է նոր մեթոդների, մոտեցումների իրագործմանը՝ ակտիվ ինտերակտիվ մեթոդների կիրառմանը: Ակտիվ, Ինտերակտիվ ուսուցման էությունը ՈՒսուցման պրոցեսում տարբերում են դասավանդման պասիվ, ակտիվ և ինտերակտիվ մեթոդներ:

Պասիվ մեթոդ- Այս դեպքում ուսուցիչը հիմնական գործող անձն է, որը ղեկավարում է դասընթացը, իսկ աշակերտները պասիվ լսողներ են: ՈՒսուցիչ աշակերտ կապը իրականացվում է հարցումների, թեստերի, ստուգողական աշխատանքների միջոցով: Այս մեթոդը քիչ էֆեկտիվ է: Դրա առավելությունը միայն սահմանափակ ժամանակում նյութի մեծ ծավալի մատուցումն է:

Ակտիվ մեթոդները հիմնված են ուսուցիչ աշակերտ համագործակցության վրա, այսինքն ուսուցիչը և աշակերտը հավասարապես մասնակցում են ուսումնական պրոցեսին:Աշակերտները պասիվ լսողներ չեն, այլ ակտիվ մասնակիցներ: Ակտիվ մեթոդների նպատակն է՝ բոլոր պրոցեսների (խոսք, հիշողություն, երևակայություն)

օգտագործումն գիտելիքների, հմտությունների յուրացման համար: Աշակերտը գիտելիք է ստանում տարբեր աղբյուրներից ինֆորմացիայի վերլուծման արդյունքում: Ակտիվ ուսուցման մեթոդները սովորելու, ճանաչողական 3 գործունեություն ծավալելու ուղիներն են, ինչի համար աշակերտները պետք է մտածեն, ստեղծագործեն: Ինտերակտիվ մեթոդը կարելի է համարել ակտիվ մեթոդների առավել ժամանակակից ձև: Այս հասկացությունը ծագել է անգլերեն «interact», «inter-փոխադարձ», «act-գործել» բառերից: Ինտերակտիվ ուսուցումը դա երկխոսությամբ ուսուցում է, որի ընթացքում աշակերտները համագործակցում են ոչ միայն ուսուցչի այլև միմյանց հետ: Ինտերակտիվ ուսուցման ժամանակ ուսուցիչը նոր գիտելիքներ փնտրելու իր հանձնարարություններով մասնակիցներին ուղղորդում է անկախ հետազոտությունների կատարմանը:

ՈՒսուցչի ֆունկցիաներն են՝

1. Բացատրել սպասվելիք աշխատանքի նպատակը: Դասի սկզբում հայտարարել թեման և քննարկվող հարցերը:

2. Բաժանել աշակերտներին խմբերի և տալ հանձնարարություններ:

3. Զբաղնել առանց ուշադրության սխալ մեկնաբանությունները, սակայն միևնույն ժամանակ միանգամից չտալ ճիշտ պատասխանը:

4. Հետևել, որ քննադատվի միտքը, կարծիքը, այլ ոչ թե միտքը արտահայտող աշակերտը :

5. Օգնել աշակերտներին գալ ընդհանուր եզրահանգման և դասի վերջում անել եզրակացություններ, որոնք ունեն պրակտիկ և ընդհանուր նշանակություն:

ՈՒսուցչի ֆունկցիան աշակերտի ինքնուրույն աշխատանքի կազմակերպումն է : Հայտնի է, որ նոր բան սովորելիս մարդը թույլ է տալիս սխալներ , ուսուցչի խնդիրը կայանում է նրանում, որ սովորողը ուսումնական պրոցեսում կատարված սխալները ուսումնասիրի, վերլուծի և հետագայում մասնագիտական գործունեության ժամանակ թույլ չտա: Ինտերակտիվ մեթոդները կիրառելիս, ուսուցիչը դադարում է լինել տեղեկատվության հիմնական տեղեկատու, միայն կարգավորում կազմակերպում է գործընթացը, տալիս խորհրդատվություն:

ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐՈՎ ԴԱՍԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Բոլոր մասնակիցները հավասար են: Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի իր կարծիքը ներկայացնել ցանկացած հարցի վերաբերյալ Աշխատանքի մեջ պետք է ներգրավված լինեն բոլորը: Ոչ մի աշակերտ չի քննադատվում: Պետք է հոգալ մասնակիցների հոգեբանական պատրաստվածության մասին. խոսքը գնում է նրա մասին, որ ոչ բոլոր մասնակիցներն են հոգեպես պատրաստ ներգրավվելու այս կամ այն աշխատանքի մեջ: Այս առումով օգտակար է գովքը, ակտիվ մասնակցության ինքնադրսևորման համար: Ուսուցիչը պարբերաբար ակտիվացնում է աշակերտների համագործակցությունը, հանում մասնակիցների միջև առաջացած լարվածությունը: Քննարկման ընթացքում անկանխատեսելի դժվարությունների դեպքում ուսուցիչը միջամտում է: Ակտիվ օգտագործվում է տեխնիկական ուսուցման միջոցներ՝ սլայդեր, ֆիլմեր, տեսահոլովակներ Հաղորդակցությունը իրականացվում է ուսուցչի կողմից ձևակերպված կանոնների համապատասխան:

Ինտերակտիվ մեթոդների կիրառման դրական արդյունքներն են՝ Ինտերկտիվ ուսուցման մեթոդները թույլ են տալիս ակտիվացնել գիտելիքների յուրացման գործընթացը և դրանց ստեղծագործական կիրառումը գործնական խնդիրների լուծման համար: Ինտերկտիվ ուսուցումը մեծացնում է աշակերտների մոտիվացիան, ներգրավվածությունը քննարկվող խնդիրների լուծման մեջ, ինչը մեծացնում է հետաքրքրությունը, հուզական խթան է հանդիսանում հետագա որոնման գործունեությանը, խրախուսում է նրանց կոնկրետ գործողությունների: Զևավորում է ինքնուրույն տեղեկատվություն գտնելու, վերլուծելու կարողությունը: Զարգացնում է մյուսների տեսակետը լսելու, համագործակցելու կարողությունը: Աշակերտների դիրքորոշման մշտական արտահայտությունը վերացնում է սխալի վախը՝ քանի որ նույնիսկ սխալ արտահայտությունը չի պատժվում բացասական գնահատականով: Համատեղ գործունեությունը նպաստում է ուսուցչի հետ վստահելի փոխհարաբերությունների առաջացմանը: Կիրառելով ինտերակտիվ մեթոդներ և տեխնոլոգիաներ ուսուցիչները հնարավորություն ունեն զարգացնել աշակերտների ստեղծագործական, կրեատիվ մտածելակերպը: Դա ընդունակություն է գտնել նոր, օրիգինալ, ստանդարտ մտածելակերպից դուրս մտքեր, առաջացած խնդիրների լուծում ոչ ավանդական եղանակներով:

Փորձարարական դասեր

Ես իմ հետազոտական աշխատանքը կատարել եմ Գեղարքունիքի մարզի Ն. Գետաշենի թիվ 1 միջն.դպրոցի 6-րդ և 12-րդ դասարաններում: Հետազոտությունս կատարել եմ միջին և ավագ դասարաններում նպատակ ունենալով ցույց տալ,թե ինչպիսի մեծ ազդեցություն կարող է ունենալ ինֆորմատիկա առարկան նույնիսկ մյուս առարկաների ուսուցման ընթացքում: Նաև իմ հետազոտության նպատակն է ցածր առաջադիմություն ունեցող աշակերտներին ներգրավել խմբային աշխատանքում իրենց ընկերների անմիջական օգնությամբ կարողանան օգտվել փորձարարական դասերում նշված ծրագրերից: Երկու դասարանում էլ իմ ուշադրության կենտրոնում ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների ներգրավածությունն է եղել: Երկու դասարանում էլ խմբերը կազմվել է խառը, բոլոր աշակերտներն էլ ունեցել են հավասար իրավունքներ և պարտականություններ: Աշխատանքները կատարվել են իմ անմիջական հսկողության ներքո:

Փորձարարական դաս-1

Այսօրվա դասի թեման Paint գրաֆիկական խմբագիրն է:Որպեսզի Paint գրաֆիկական խմբագրով կատարեին աշխատանքը, նախորդ դասին տանը հանձնարարել եմ կրկնել Paint գրաֆիկական խմբագրի հնարավորությունները,սովորել Հայաստանի վարչական տարածքների, մարզերի և մարզկենտրոնների անունները և աշխարհագրական դիրքը: Դասի սկզբում մտագրոհ մեթոդով երեխաները վեր հիշեցին Հայաստանի վարչական բաժանումը: Նախապես բաժանված յուրաքանչյուր խմբին հանձնարարել եմ գծել Հայաստանի քարտեզը,տարբեր գույներով գունավորել մարզերը,նշել նրանց և մարզկենտրոնների անունները: Աշխատանքը կատարելուց հետո

պահպանել համակարգչում: Աշխատանքները ավարտելուց հետո խմբի անդամներից մեկը ներկայացնում է աշխատանքը :Բոլոր աշխատանքները ներկայացնելուց հետո խմբերին հանձնարարվում է պատասխանել հետևյալ հարցերին,

1,Ինչի համար է Հայաստանի տարածքը բաժանված վարչական մասերի

2,Քանի մարզ ունի Հայաստանը

3,Երկրների,տարածքների.քաղաքների ինչպիսի վարչական մասերի բաժանումներ գիտեն

4,Ինչպես կգնահատեն իրենց աշխատանքը:

Աշխատանքի կատարման ընթացքում հետևել եմ այն աշակերտներին ,որոնք ունեին ցածր առաջադիմություն և պասիվ մասնակցություն դասերին: Այդ աշակերտներին հանձնարարվել է,որ իրենք առանձին ներկայացնեն աշխատանքները: Դասի ավարտին յուրաքանչյուր խումբ գնահատել է մյուս խմբի աշխատանքը:Դասապլանը ներկայացված է հավելվածում:

Փորձարարական դաս-2

Դասի թեման Տվյալների բազմաղյուսակ հեմիերն է: Դասի ընթացքում աշակերտները պետք է ստեղծեն տվյալների բազմաղյուսակ, նախապես հանձնարարված թեմայով:Նախապես բաժանված խմբերից յուրաքանչյուրին հանձնարվում է ստեղծել աղյուսակ :

I-ին խմբի թեման Հայֆիլմ կինոստուդիայի նկարահանած առնվազն 6-8 ֆիլմ :Աղյուսակում պետք է լինեն հետևյալ տվյալները,երբ է նկարահանվել,ով է գլխավոր ռեժիսորը,ովքեր են գլխավոր դերակատարները:

II խմբի թեման.ըստ խմբի ցանկության ներկայացնել հայ գրողներ ,նրանց ստեղծագործություններից առնվազն 2-ը և այդ ստեղծագործության հրատարակման տարեթիվը:

Աշխատանքը կատարելուց հետո յուրաքանչյուր խումբ իրենց աշխատանքը ներկայացնելուց հետո պետք է առաջին խումբը ներկայացնի որևէ ֆիլմի սյուժե,իսկ երկրորդ խումբը որևէ գրողի ստեղծագործություն: Ամբողջ դասի ընթացքում ուշադրության կենտրոնում են ցածր առաջադիմություն ունեցող աշակերտները: Այդ աշակերտները պետք է պատասխանեն հետևյալ հարցերին

1.Ինչպես պետք է մտնեն Microsoft Access համակարգ

2.ինչպես ստեղծել պարզագույն աղյուսակ

3.ինչպես տվյալները մուտքագրեն այդ աղյուսակում:

Դասի ավարտին գնահատվել են ցածր առաջադիմություն ունեցող աշակերտներից 2-ը և 3 աշակերտ լավագույներից:Հանձնարարվել է տնային հանձնարարություն հաջորդ դասը,ըստ որի պետք ստեղծված աղյուսակում ավելացվի հարցումներ:

Եզրակացություն

Իմ կատարած հետազոտական աշխատանքից ես եկա այն եզրակացության, որ աշակերտի ուսման որակը, արժեքային համակարգի ձևավորումը կարելի է բարձրացնել նաև ինտերակտիվ մեթոդների միջոցով:Երկու դասարանում էլ,չնայած տարիքային առանձնահատկությունների , ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների ներգրավվածությունը դասին կարելի է բարձրացնել, եթե առաջադրանքները ճիշտ ընտրվեն:

Դասավանդման այս եղանակը մշակելիս՝ կազմեցի գործողությունների այնպիսի հաջորդականություն, որ երբ աշակերտի մոտ ինչ – որ քայլ, ինչ – որ գործողություն ստացվում է, նա ինքնուրույն պատրաստվում է հաջորդ քայլին և հաջորդ գործողությանը: ՈԻմ մոտ ինչ-որ բան չի ստացվում մյուս ընկերների օգնությամբ կարող է հասնել վերջնարդյունքի ,կարելի է ասել,որ ինչ-որ չափով ստացվեց:

Դասարանի բարձր առաջադիմությունը ապահովելու համար, առաջավոր և հետ մնացող աշակերտների համար կազմակերպեցի անհատական աշխատանքներ: Արդյունքում ամբողջ դասարանը մասնակցում է դասապրոցեսին: Հետաքրքրությունը բարձրացնելու և աշխատանքի մեջ ներգրավելու համար՝ ծրագրի սահմաններում նրանց տալիս եմ լրացուցիչ աշխատանքներ: Այս տեսակ առաջադրանքներն են հիմնականում բարձրացնում երեխաների մոտ առարկայի նկատմամբ հետաքրքրություն, մտածողություն, զննականություն և ուսման որակ: Այս դասերը հետաքրքիր և բովանդակալից են դասարանի բոլոր աշակերտների համար:

Ստորև ներկայացված դասապլաններից երևում է, որ ինտերակտիվ ուսուցման մեթոդներով ես կարողացել եմ բոլոր աշակերտների համար ապահովել պետական չափորոշչով սահմանված նվազագույն պահանջները:Աշակերտները խոստովանեցին, որ այս կերպ ուսուցումն ավելի արդյունավետ է:

Վերլուծելով երկու աշխատանքների արդյունքները, եկա այն եզրակացության, որ առաջադիմության աճը պայմանավորված է հետևյալ գործոններով

- առաջադրանքների ճիշտ ընտրությամբ
- տարբեր բարդությունների առաջադրանքների կատարմամբ

- թեմայի հիշեցում և ամփոփում՝ զույգային և խմբային աշխատանքներով

Հետազոտվող աշակերտների կատարած աշխատանքները ինձ գոհացրին:

Գրականության ցանկ

1.Հանրակրթական պետական չափորոշիչներ Երևան 2011

2.Աստվածատրյան Մ.,Ավագյան Մ.,Թերզյան Գ. Մանկավարժական կրթության

Զարգացման հայեցակարգ Երևան 2014

3.Ինֆորմատիկայի ուսուցիչների եռօրյա վերապատրաստման ուղեցույց Երևան 2007

Հավելվածներ

Դասապլան 1

Առարկա՝	Ինֆորմատիկա	Ամսաթիվ	22.10.2021	Կիսամյակ	1-ին	Դասարան	6րդ
Թեմա՝	Point գրաֆիկական խմբագիր						
Օգտագործվող նյութեր՝	Գրատախտակ, կավիճ, տետրեր, գրիչ դասագիրք ,համակարգիչ,պրոյեկտոր:						
Ամբողջական պատկեր՝	Նախորդ դասին հանձնարարվել է կրկնել գրաֆիկական խմբագիրը,Հայաստանի վարչական բաժանումը:Յուրաքանչյուր մարզի մասին պետք է հակիրճ տեղեկություն տան:						
Դասի նպատակը՝	Ամբողջ դասարանի ներգրավածությունը դասին,ինչպես նաև ծանոթանան Հայաստանի վարչական բաժանմանը և իմանան մարզերը իրենց մարզկենտրոններով:Այդ բոլոր աշխատանքները պետք է կատարվեն Point գրաֆիկական խմբագրով:						
Վերջնարդյունքները	Աշակերտները կկարողանան գծել քարտեզը,պահպանել մարզկենտրոնների պայմանական նշանների տեղադրման համաչափությունը,կկարողանան օպերացիոն համակարգի միջավայրում աշխատել ֆայլերի հետ:						

Ուսուցչի զարգացման ընթացիկ թիրախներ	Նպատակներին հասնելու ռազմավարությունը
	Խմբային աշխատանքներ, թեմայի հետ կապված տարբերակված հարցադրումներ ըստ կարողությունների,

Գործողություններ (ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն *Աշակերտներ*	Պլանավորած տարբերակում և Ու.Գ.ռազմավարություններ *Ուսուցիչ*	Հարցադրումներ և կիրառվող մեթոդներ:
5րոպե-ներկա-բացակա 20րոպե-ընթացք	Մտնել Point գրաֆիկական խմբագրի միջավայր: Կատարեն յուրաքանչյուրին հանձնարարված աշխատանքը: Աշակերտները սկսում են աշխատել իրենց առաջադրանքների վրա, հանձնում են աշխատանքները Աշակերտները ներկայացնում են աշխատանքները և պատասխանում են հարցերին:	Ողջունել դասարանին, հաղորդել բարձրածայն դասի թեման, դասի նպատակը Հետևի,որ ճիշտ կատարեն հանձնարարությունը: Թիրախավորել հարցերը՝ աշխատելով հնարավորինս շատ աշակերտներ ներգրավվել Տալ ,,կեղծ,, հարցեր	Մտածիր-զուգորդիր մտքեր փոխանակիր,Պրիզմա մեթոդը,մտագրոհ մեթոդ

17 րոպե 3 րոպե-ավարտ		Զարգացնել աշակերտների պատասխանները՝ ստեղծելով ,,հավելյալ,, արժեքներ Տալ ուղղորդող հարցեր Տալ անհատական բանավոր հետադարձ կապ Օժանդակություն տրամադրել հիմնականում ,,ցածր,, առաջադիմություն ունեցող աշակերտներին, Բացատրել անհասկանալի հատվածները Ամփոփել հիմնական մտքերը:Տնային աշխատանքի հանձնարարում:	Հարցերի առաջադրում՝ պարզից դեպի բարդ 1.Ինչի համար է Հայաստանի տարածքը բաժանված վարչական տարածքների 2.Քանի մարզ ունի Հայաստանը 3.Երկրների,տարածքների,քաղաքների ինչպիսի վարչական մասերի բաժանումներ գիտեն Խորանարդում մեթոդով ամփոփել դասը: Տալ անհատական բանավոր հետադարձ կապ հաջորդ դասին
Գնահատում	Ձևավորող գնահատում ողջ դասապրոցեսի ժամանակ, բանավոր հետադարձ կապի տրամադրում		

Տնային աշխատանք	6-րդ դաս. Դասագիրք՝ էջ 78 լաբորատոր աշ.2-3:

Դասապլան -2

Առարկա՝	Ինֆորմատիկա	Ամսաթիվ	22.10.2021	Կիսամյակ	1-ին	Դասարան	12-րդ

Թեմա՝	Տվյալների բազմաղյուսակ հեհիթեր:
Օգտագործվող նյութեր՝	Գրատախտակ, կավիճ, տետրեր, գրիչ դասագիրք ,համակարգիչ,պրոյեկտոր:
Ամբողջական պատկեր՝	Նախորդ դասին հանձնարարվել է կրկնել աղյուսակների ստեղծումը, տվյալների կարգավորումը և որոնումը:
Դասի նպատակը՝	Ամբողջ դասարանի ներգրավածությունը դասին:Աղյուսակների ստեղծում,լրացում,խմբագրում և պահպանում: .

Վերջնարդյունքները	Աշակերտները կկարողանան ստեղծել աղյուսակ ,լրացնեն աղյուսակը,կարգավորեն և վերջում կարողանան կառուցել հարցումներ տվյալները կարգավորելու նպատակով:

Ուսուցչի զարգացման ընթացիկ թիրախներ	Նպատակներին հասնելու ռազմավարությունը
	Խմբային աշխատանքներ, թեմայի հետ կապված տարբերակված հարցադրումներ ըստ կարողությունների,

Գործողություններ (ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն *Աշակերտներ*	ՊլանավորածտարբերակումևՈՒԳռազմավարություններ *Ուսուցիչ*	Առանցքային հարցեր Օգտագործվող մեթոդներ
5րոպե-ներկա-բացակա 20րոպե-ընթացք	Մտնել Ms Access համակարգի միջավայր	Ողջունել դասարանին, հաղորդել բարձրաձայն դասի թեման, դասի նպատակը	Մտագրոհի մեթոդ,M-ածև աղյուսակ ,մտածիր,զուգորդիր.մտքեր փոխանակիր

	Պատասխանել հարցերին և սկսել իրենց հանձնարարված աշխատանքը Նշումներ անել տետրերում Փակ հարցերին պատասխանել անվանակոչվածները Փոխանակել մտքեր ընկերների հետ	Տալ ուղղորդող հարցեր,բանավոր հետադարձ կապ Թիրախավորել հարցերը՝ աշխատելով հնարավորինս շատ աշակերտներ ներգրավվել Տալ ,,կեղծ,, հարցեր Զարգացնել աշակերտների պատասխանները՝ ստեղծելով ,,հավելյալ,, արժեքներ հսկել աշխատանքները, հետևել ժամանակին	
17բոպե	աշակերտները հանձնում են աշխատանքները և յուրաքանչյուր խումբ պատասխանում է իրենց խմբին հանձնարված հարցերին	Օժանդակություն տրամադրել հիմնականում ,,ցածր,, առաջադիմություն ունեցող աշակերտներին,	

Յրոպե-ավարտ		Ամփոփել հիմնական մտքերը:Տնային աշխատանքի հանձնարարում:	Տալ անհատական բանավոր հետադարձ կապ հաջորդ դասին,
Գնահատում	Ձևավորող գնահատում ողջ դասապրոցեսի ժամանակ, բանավոր հետադարձ կապի տրամադրում		
Տնային աշխատանք	12-րդ դաս. Դասագիրք՝ էջ 30 Հարցումներ:Լաբորատոր աշ.1.4		